

Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՅԱԼ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ (3 մայիս 1983 թ.)

Հարգարժան պատգամավորք,

Այսօր, երբ թեմիդ բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսի հրավերով կգումարեք թեմիդ տարեկան պատգամավորական ժողովը, Մենք՝ ձեր Հայրապետը, մխիթարված սրտով ձեզի բոլորիդ կհղենք Աստուծո օրհնությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն և ամենաբարի մաղթանքները Մեր սրտեն բխած:

Գիտենք, որ հավաքված եք ձեր առաջնորդ սրբազան հոր շուրջ, լիապես գիտակից ձեր հոգեշեն գործի նվիրականության, լիապես գիտակից միշտ բարձր պահպանելու սուրբ անունը մեր առաքելական Մայր Եկեղեցիին, լիապես գիտակից թեմիդ համայնքներու մեջ ավելի ու ավելի հայեցի կրթական դաստիարակչական աշխատանք ծավալելու անհրաժեշտության: Մեր մշտատև աղոթքն է և ջերմագին իղձը, որ Սփյուռքի տարածքի վրա մեր Մայր Եկեղեցին ու հավատացյալ ժողովուրդը մնան հաստատ և անայլայլ հայոց լույս հավատքի և ոգեկանության վեմին վրա, աստվածապարգև Սուրբ Էջմիածնի օրհնության ներքև:

Թող բարին Աստված կորավիգ և մարտակից մնա ձեզի ամենուդ ձեր նվիրական առաքելության ճամփուն վրա:

«Չի թէպէտ և մարմնով հեռի եմ, այլ հոգով ընդ ձեզ եմ. խնդամ իբրև տեսանեմ զկարգն ձեր և զհաստատութիւն հաւատոցն ձերոց որ ի Քրիստոս Յիսուս» (Կողոս. Բ 5): Ամեն: